և յանդիմանութեան», ընդհանուր բովանդակությունն ու ասելիքը (էջ 230), այսինքն՝ այդ կերպ վկայագրվել է ամբողջական նամակագրություն:

Ընդհանուր բովանդակությամբ ներկայացնելով՝ Դավրիժեցին երբեմն վկայագրում է նաև նամակագրական կապեր, այսինքն՝ երբ առնվազն նամակների մեկանգամյա փոխանակություն կատարվել է: Այդպես է հայազգի խոջա Նազարի և իրանական Շահսեֆի արքայի նամակագրությունը (էջ 256): Ուշագրավն այն է, որ Դավրիժեցին այստեղ ևս չի մոռանում նամակագիրների դասային պատկանելության մասին, որն, ի դեպ, կայուն դրսևորվում է նրա պատմագրքում. խոջա Նազարի նամակը տարազվում է իբրև «արզայ» (խնդրագիր), իսկ արքա Շահսեֆիինը՝ «նոմոս» (հրովարտակ):

Տեղեկատվական բնույթի մի թուղթ Դավրիժեցին նույնպես հիշատակում է ընդհանուր բովանդակությունը ներկայացնելով: Խոսքը վերաբերում է Գրիգոր վարդապետի նամակին՝ ուղղված Մելքիսեթ կաթողիկոսին, որով նա տեղեկացնում է «զանուղղայ վարս Նիկօլին» (էջ 297):

Երբեմն բովանդակության ներկայացումը պատմիչը կատարում է բառային բնորոշումներով: Այդպես, հիշատակելով այն փաստը, որ Մովսես կաթողիկոսը նամակ է գրել լեհաց թագավորին, նրա իշխաններին, Լվով քաղաքի արքեպիսկոպոսին ու Հռոմի պապին, Դավրիժեցին նախ բնութագրում է այն՝ «նամակս խոհեմականս՝ և լի իմաստութեամբ, խոնարհ և մաղթողական բանիւ» և ապա համառոտ ներկայացնում նամակի բովանդակությունը (էջ 305):

Դավրիժեցին հաճախ է բնորոշում ներբերվող և հատկապես պարզապես հիշատակվող թղթային միավորները՝ մի կողմից ցուցանելով դրանց բովանդակային հատկանիշները, մյուս կողմից՝ առանձնացնելով թղթի ներժանրային տեսակներ: Երևույթը բնորոշ է հայ պատմագրությանն ընդհանրապես: Դավրիժեցու